ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՈՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ամենայն Հայոց Հայրապետության Աղգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի հանձնարարությամբ ապրիլ ամսին, Մերձավոր Արևելք գործուղվեց Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի գլխավոր քարտուղար պրոֆ. դոկ. Աշոտ Աբրահամյանը, որպես ներկայացուցիչ Ս. Էջմիածնի և Ամենապ. Տ Տեղակալի։ Պրոֆ. դոկ. Ա. Աբրահամյանի օգնական և անձնական քարտուղար է նշանակված պ. Անուշավան Տեր-Գրիգորյանը։

Պատվիրակության անունով տրված կոնդակի մեջ Ամենապ. Տ. Տեղակալը գծում է այն նպատակը, որ դրված է պատվիրակության առաջ և այն ուղենիշը, որով պետք է առաջնորդվի Հայրապետական պատվիրակությունը իր առաքելությունը կատարելու ժամանակ։

Ամենապ. Տ. Տեղակալի կոնդակի մեջ ասված է.

«Հայաստանյայց առաքելական եկեղեցու նախնի հայրապետները հեռավոր համայնքների հետ սերտ կապ պահպանելու նպատակով ուղարկում էին իրենց նվիրակները նրանց մոտ, նրանց մխիթարելու և եկեղեցական գործերի վրա վերահսկողություն ունենալու համար։

«1941 թվի ապրիլի 10-ին Ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովն էլ հանձնարարել է Գերագույն Հոգևոր Խորհրդին պարբերաբար ուղարկել լիազոր ներկայացուցիչներ Միությունական Հանրապետության և արտասահմանի թեմերը ծանոթանալու նրանց իրական վիճակին, հոգևոր իշխանության գործունեության, վերահսկողության և ըստ հարկին ցուցումներ տալու նպատակով։ Այլ և թեմերի ու Մայր Աթոռի մեջ գոյություն ունեցող կապը ևս առավել խորացնելու և սերտացնելու համար և այդ բոլորի մասին զեկուցանելու Գերագույն Հոգևոր իշխանության ի տեսություն։

«Ներկայումս նկատի առնելով, որ պատերազմի պատճառով դժվարացել է մեր հարաբերությունը արտասահմանի հետ, հետևելով եկեղեցու ավանդական սովորության և ի կատարումն ազգային-եկեղեցական ժողովի որոշման, Մենք կարգում ենք Ձեզ Մեր և Ս. Էջմիածնի ներկայացուցիչ տալով Ձեզ երբև օգնական և անձնական քարտուղար պ. Անուշավան Տեր-Գրիգորյանին այցելելու Մերձավոր Արևելքի հետևյալ թեմերն ու վայրերը՝ Իրանահնդկաստանի, Ատրպատականի, Իրաքի, և Եգիպտոսի թեմերը, ս. Երուսաղեմի վանքը և Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, հաղորդելով նրանց ղեկավարներին Մեր եղբայրական սիրո ողջույնը և Մեր աղոթքը Ս. Էջմիածնի դարավոր բոլոր սրբությունների հիշյալ սրբավայրերի և թեմերի ղեկավարներին առողջություն և կարողություն իրենց վրա դրված ծանր և պատասխանատու լուծը հաջողությամբ կատարելու և այդ վայրերում ապրող մեր հոտին խաղաղ և բարօր կյանք շնորհելու համար։

«Պատվիրում ենք Ձեզ առաջին այցելությունը տալ Իրանին, նախապես ներկայանալով Արևագնափայլ Շահին և մյուս բարձր պաշտոնական անձանց, նվիրելով նոցա Մեր հարգանաց ողջույններն ու բարեմաղթությունները։

«Իրանի Գահակալի թույլտվությամբ և խորհրդակցությամբ Իրանա-Հնդկաստանի կրոնական խորհրդի, այլ և նկատի առնելով Թեհրանի ու Սպահանի համայ-

նական վարչության նախագահների տեսակետները, կազմակերպել Թեհրանի թեմ, անջատելով Թեհրանը իր շրջակայքով Իրանա-Հնդկաստանի թեմից: Նորակազմ թեմի վարչական կազմակերպության նը-կատմամբ հեռագրական հարաբերության մեջ մտնել Մեզ հետ:

«Ուսումնասիրել առտեղյավ Իրանա-Հնդկաստանի թեմական Առաջնորդի ընտրության հարցը, խորհրդակցելով տեղական եկեղեցական և ազգային հաստատությունների և կարևոր անձանց հետ, պարզել այդ հարցի լավագույն լուծումը և ներկայացնել Մեզ ի տեղեկություն; Կաբեվորության դեպքում հեռագրով հարաբերել»: